ԿԱՐԾԻՔ

Գայանե Ռուբիկի Թովմասյանի «Զբոսաշրջության զարգացման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» թեմայով ատենախոսության վերաբերյալ, ներկայացված Ը.00.02 - «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության դոկտորի գիտական աստիճանի հայցման համար

Թեմայի արդիականությունը. Ներկայացված ատենախոսության թեման խիստ արդիական է, հաշվի առնելով, որ զբոսաշրջության զարգացումը մեր երկրում տնտեսական զարգացման առաջնահերթ ուղղություններից մեկն է հանդիսանում, և զբոսաշրջության զարգացումը կարող է նպաստել զբաղվածության ընլայնմանը, ենթակառուցվածքների զարգացմանը նաև հեռավոր մարզերում: Մեր երկիրը, ունենալով զբսաշրջության զարգացման համար անհրաժեշտ ռեսուրսներ, ցավոք, դեռևս չի իրացրել այդ հնարավորությունները, ըստ Զբոսաշրջության զարգացման համաշխարհային զեկույցի զբաղեցնելով միջին հորիզոնականը: Օրինակ, SS ոլորտի ներդրումը ՀՆԱ-ում շուրջ 15-20 հազար զբաղվածների պայմաններում գերազանցել է 5-6 տոկոսը, իսկ զբոսաշրջության ոլորտի ներդրումը, շուրջ 100-120 հազար աշխատատեղով 2021թ. կազմել է ՀՆԱ-ի 6.1 տոկոսը:

Ատենախոսության նպատակը և խնդիրները.

Հետազոտության հիմնական նպատակն է հանդիսացել ՀՀ-ում զբոսաշրջության զարգացման տեսագործնական և հայեցակարգային հիմքերի մշակումը:

Այդ նպատակով հեղինակի կողմից օգտագործվել են տեղական և արտասահմանյան գիտական աղբյուրներ, ուսումնասիրվել է ոլորտը կարգավորող

օրենսդրական դաշտը, ինչպես նաև կիրառվել են հետազոտության և վերլուծության տարբեր եղանակներ:

Սահմանված նպատակին հասնելու համար ատենախոսության մեջ առաջադրվել են մի շարք խնդիրներ, որոնցից առանցքային են՝

- զբոսաշրջության տեսամեթոդական հիմքերի, ինչպես նաև զբոսաշրջության արդի վիճակի և ոլորտի կարգավորման օրենսդրահիրավական դաշտի վերլուծություն;
- միջազգային զբոսաշրջության զարգացման միտումների և փորձի ուսումնասիրություն;
- ՀՀ ներքին և ներգնա զբոսաշրջության զարգացման կանխատեսում և տնտեսության վրա զբոսաշրջության ազդեցության գնահատում տնտեսամաթեմատիկական մեթոդների կիրառման միջոցով;
- ՀՀ-ում զբոսաշրջության հիմնական տեսակների զարգացման հնարավորությունների բացահայտում;
- զբոսաշրջության զարգացման խոչնդոտների վերլուծություն;
- ՀՀ-ում զբոսաշրջիկների գոհունակության ինդեքսի կիրառման մեթոդաբանության մշակում;
- հանրապետությունում զբոսաշրջության կայուն զարգացման հնարավորությունների վերլուծություն:

Ատենախոսության հիմնական արդյունքներն ու գիտական նորույթը. Հետազոտության հիման վրա ստացվել են տեսամեթոդական և գործնական նշանակություն ունեցող մի շարք արդյունքներ, որոնցից **գիտական նորույթ** են հանդիսանում հետևյալ արդյունքները.

1. Գնահատվել է ներքին և ներգնա զբոսաշրջության ցուցանիշների, այդ ոլորտում պետական ծախսերի և ներդրումների ազդեցությունը ՀՆԱ-ի, զբաղվածության և համապատասխան ծառայությունների, այդ թվում կացության և հանրային սննդի ծառայությունների ծավալների վրա;

2. Կատարվել են ներգնա զբոսաշրջության գծով կանխատեսումներ մի շարք եղանակներով, այդ թվում ARIMA, ստատիկ և դինամիկ մոդելների միջոցով, գնահատվել են ներքին զբսաշրջության վրա ազդող գործոնները և ազդեցության

չափը; հիմնավորվել է զբոսաշրջության ծավալների աճը ինչպես փոքր մասշտաբի, այնպես էլ բարդ մոդելների միջոցով;

3. Իրականացվել է կորելյացիոն համեմատական վերլուծություն ՀՀ և 40 երկրների միջև զբոսաշրջության մարքեթինգի և զարգացմանն ուղղված պետական ծախսերի ու ներգնա զբոսաշրջության և դրանից ստացվող եկամուտների միջև, որի հիման վրա մշակվել են քայլեր ուղղված զբոսաշրջային մարքեթինգի բարելավմանը;

4. Մշակվել է հատուկ գործիք՝ ARMQUAL, հյուրանոցային ծառայությունների որակի գնահատման համար, որի միջոցով իրականացվել է ծառայությունների որակի գնահատում և վերլուծություն;

5. Մշակվել է զբսաշրջիկների գոհունակության գնահատման ձևաչափ և գնահատվել է զբսաշրջիկների գոհունակության ինդեքսը, ինչպես նաև վերլուծության միջոցով ներկայացվել են բացահայտված հիմնախնդիրների լուծման ուղիները:

Ատենախոսության արդյունքների գործնական և գիտական նշանակությունը.

Հետազոտության արդյունքում ստացված գիտական արդյունքները և առաջարկությունները կարող են օգտագործվել ՀՀ և մարզերի զբոսաշրջության կայուն զարգացման ռազմավարության մշակման, զբոսաշրջային քաղաքականության, այդ թվում մարքեթինգի արդյունավետության բարձրացման նպատակով:

Ատենախոսության կառուցվածքը և հիմնական բովանդակությունը.

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, չորս գլուխներից, եզրակացություններից ու առաջարկություններից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածներից:

Ատենախոսության առաջին՝ **«Զբոսաշրջության զարգացման տեսամեթոդական և գործնական հիմքերը»** գլխում ներկայացվել են զբոսաշրջության տնտեսագիտական բովանդակությունը և զարգացման միտումներն աշխարհում: Հատկապես հետաքրքրություն է ներկայացնում զբոսաշրջության կառավարման և զարգացման միջազգային փորձի ուսումնասիրությունը, որը ներառել է ինչպես

ԵԱՏՄ երկրները, այնպես էլ զբոսաշրջության զարգացման հարուստ փորձ ունեցող այլ երկրներ:

Ատենախոսության երկրորդ՝ **«Զբոսաշրջությունը որպես ՀՀ տնտեսության ոլորտ»** գլխում վերլուծվել են ՀՀ-ում զբոսաշրջության ներկա վիճակը, զարգացման միտումները, գնահատվել են ոլորտի ազդեցության ցուցանիշները: Էկոնոմետրիկական մոդելավորման միջոցով հնարավոր է եղել գնահատել և կանխատեսումներ կատարել ներգնա զբոսաշրջության ցուցանիշների վերաբերյալ: Այս գլխում նաև քննարկվել են ՀՀ-ում զբոսաշրջության մրցունակության բարձրացման հիմնախնդիրները:

Ատենախոսության երրորդ՝ **«Զբոսաշրջության հիմնական տեսակների զարգացման նախադրյալներն ու հեռանկարները ՀՀ-ում»** գլխում ներկայացվել են ՀՀ-ում զբոսաշրջության մի շարք տեսակների, այդ թվում առողջարանային-վերականգնողական, կրոնական և պատմամշակութային, գաստրոնոմիական և գինու, ագրո- և էկո- զբսաշրջության զարգացման հնարավորությունները մեր երկրում: Կարևոր է, որ քննարկվել են զբոսաշրջության զարգացման հիմնախնդիրները մարզերում:

Ատենախոսության չորրորդ՝ **«Զբոսաշրջության զարգացման հիմնական ուղիները ՀՀ-ում»** գլխում կատարվել է SWOT վերլուծություն, ինչպես նաև մարքեթինգային հիմնահարցերի ուսումնասիրություն: Ատենախոսը անդրադարձել է հյուրանոցային ծառայությունների որակի գնահատմանը, ինչպես նաև զբոսաշրջիկների գոհունակության գնահատմանը: Կարևոր նշանակություն ունի աշխատաշուկայի և զբոսաշրջության կրթության բարելավման կապի ապահովման հիմնախնդիրների ուսումնասիրությունը: Մասնավորապես վերլուծվել է աշխատաշուկայի պահանջարկը զբոսաշրջության ոլորտի մասնագետների գծով, իսկ մյուս կողմից ուսումնասիրվել է ոլորտի աշխատուժի առաջարկի որակը բուհերի և մյուս ուսումնական կազմակերպությունների կրթական ծրագրերի և հարցման կազմակերպման միջոցով: Վերջապես, այս գլխի վերջին պարագրաֆում ատենախոսն անդրադարձել է զբոսաշրջության կայուն զարգացման ապահովման նախադրյալներին և հիմնական քայլերին:

Հետազոտության հիման վրա ատենախոսի կողմից կատարվել են մի շարք եզրակացություններ և առաջարկություններ, որոնք ուղղված են երկրում կայուն

զբոսաշրջության զարգացմանը և անհրաժեշտ համակողմանի քայլերի իրականացմանը:

Դիտողություններ և առաջարկություններ.

1. Կարծում ենք, որ երրորդ նորույթը, որը վերաբերում է միջոցառումների մշակմանը կապված ՀՀ-ում զբոսաշրջության հեռանկարային տեսակների զարգացման հետ, ըստ էության չի կարող դիտարկվել որպես գիտական նորույթ: Այն պարունակում է գործնական առաջարկություններ, որոնք վերաբերում են, օրինակ գաստրոզբոսաշրջության, կրոնական և պատմամշակութային, առողջարանային-վերականգնողական զբոսաշրջության և ոլորտի այլ տեսակների զարգացմանը, նոր երթուղիների կազմակերպմանը և մարքեթինգային միջոցառումների իրականացմանը:

2. Ատենախոսության յոթերորդ նորույթը մասնակի կարելի է դիտարկել որպես գիտական նորույթ այն տեսանկյունից, որ զբոսաշրջության մեջ առկա է որակյալ աշխատուժի պահանջարկ, և ատենախոսին հաջողվել է ուսումնասիրել էլեկտրոնային կայքէջերի տվյալները ոլորտում թափուր աշխատատեղերի վերաբերյալ: Միևնույն ժամանակ այս կետը հիմնականում գործնական միջոցառումների փաթեթի շրջանակներում ուղղված է կրթական ծրագրերի բարելավմանը, ինչը կարելի է դիտարկել որպես բուհերում կրթական ծառայությունների որակի բարելավման անընդհատ գործընթաց:

3. Ատենախոսության վեցերորդ նորույթը վերաբերում է զբոսաշրջիկների գոհունակության գնահատման ինդեքսին, ինչն իհարկե, շատ կարևոր է, սակայն, կարծում ենք, որ նման գնահատումը չպետք է միանվագ լինի, այլ առաջարկվի ոլորտը կարգավորող մարմնին սահմանել մոնիտորինգ և կիրառել առաջարկված գործիքը զբոսաշրջության կազմակերպման արդյունավետությունը գնահատելու նպատակով:

4. Զբոսաշրջության ոլորտի զարգացման վրա մեծապես ազդում են գների աճը և փոխարժեքի տատանումները: Ատենախոսության մեջ այս գործոնի ազդեցությունը զբոսաշրջության վրա գրեթե չի դիտարկվել: Մինչդեռ, դոլարի և եվրոյի փոխարժեքի զգալի անկման և դրամի ռեվալվացիայի հետևանքով տուրոպերատորները վնասներ են կրում: Ըստ գնահատումների զբոսաշրջային

արտադրանքը շուրջ 30 տոկոսով թանկացել է, բայց տուրոպերատորների կողմից գները չեն փոխվում երկրի համբավին չվնասելու համար:

5. Ատենախոսության էջ 148-ում նշվում է, որ ՀՀ զբոսաշրջության մրցունակության համաթիվը, ըստ Զբոսաշրջության մրցունակության միջազգային զեկույցի 2021թ. 2019թ. համեմատ աճել է 3.7-ից մինչև 4.0, սակայն առնվազն կասկածներ են առաջանում նշված ինդեքսի որոշ բաղադրիչների վերաբերյալ: Օրինակ, ապահովության և անվտանգության, ինչպես նաև գնային մրցունակության ենթացուցանիշների գծով փաստորեն ամենաբարձր գործակիցներն են գրանցվել՝ 6.0 (19-րդ տեղը), մինչդեռ բնական և մշակութային ռեսուրսների գծով՝ ամենացածր գործակիցը՝ 1.7 կամ 108-րդ տեղը 140 երկրների մեջ: Ակնհայտ է սուբյեկտիվ գործոնների էական դերը զբոսաշրջության մրցունակության համաթվի գնահատման հարցում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Վերընշված թերությունների և բացթողումների հետ մեկտեղ ատենախոսությունն իրենից մեծածավալ աշխատանք է ներկայացնում, հետաքրքիր և արժեքավոր հետազոտություն: Աշխատության բազմաթիվ առաջարկությունների կիրառումը կարող է նպաստել հանրապետությունում կայուն զբոսաշրջության զարգացմանը, ինչպես նաև զբոսաշրջային քաղաքականության արդյունավետության բարձրացմանը: Հեղինակի կողմից հրատարակված գիտական աշխատությունները արտացոլում են ատենախոսության հիմնական դրույթները:

Գայանե Ռուբիկի Թովմասյանի «Զբասաշրջության զարգացման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» թեմայով ատենախոսությունը, ներկայացված Ը.00.02 - «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության դոկտորի գիտական աստիճանի հայցման համար, համապատասխանում է ՀՀ Կառավարության 1997թ. օգոստոսի 8-ի թիվ 327 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» 6-րդ և 8-րդ կետերի պահանջներին, ինչպես նաև՝ ՀՀ ԲՈԿ-ի

կողմից դոկտորական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին, իսկ հեղինակն արժանի է Ը.00.02 - «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության դոկտորի գիտական աստիճանի շնորհմանը:

Պաշտոնական ընդդիմախոս
Հայաստանի պետական տնտեսագիտական
համալսարանի բիզնես վարչարարության
ամբիոնի վարիչի պաշտոնակատար,
պրոֆեսոր,
տնտեսագիտության դոկտոր **Ա.Ս. Մելքումյան**

պրոֆեսոր Ա.Ս.Մելքումյանի ստորագրությունը հաստատում եմ
ՀՊՏՀ գիտական քարտուղար՝ **Ն. Դարբինյան**
22.11.2022